

Հայաստանի Հանրապետության
Հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
նախագահ՝
պրն Ռ. Նազարյանին

Ելից/ ԿԼ/ 4025 / 07.08.17

Երևան, 07 օգոստոս , 2017

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Նազարյան

Խնդրում եմ վերանայել ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016թ-ի դեկտեմբերի 9-ի «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին» N 397Ա որոշմամբ հաստատված Լիցենզիայի պայմանների N 1 հավելվածի համաձայն «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպասարկվող տարածքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայության մատուցման սակագները:

Առաջարկվող

1. Խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման մանրածախ սակագինը՝ 137.633 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր մատակարարված խմելու ջրի դիմաց առանց ավելացված արժեքի հարկի և 165.160 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման մանրածախ սակագինը՝ 24.288 դրամ յուրաքանչյուր խորանարդ մետր հեռացված ջրի դիմաց առանց ավելացված արժեքի հարկի և 29.146 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

3. Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ անձանց, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող համայնքներին, համայնքային բյուջետային հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին՝

ա) խմելու ջրի մատակարարման մեծածախ ծառայության մատուցման սակագինը՝ 32.384 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր մատակարարված խմելու ջրի դիմաց առանց ավելացված արժեքի հարկի և 38.861 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը :

բ) ջրահեռացման մեծածախ ծառայության մատուցման սակագինը՝ 16.192 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր հեռացված ջրի դիմաց՝ առանց ավելացված հարկի և 19.431 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը :



4) <<Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն>> փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագինը՝ 9.402 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր հեռացված ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 11.282 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը: Հավաստում եմ, որ իմ կողմից ներկայացված հայտը պարունակում է ստույգ տեղեկատվություն և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթեր և հաշվարկներ:

Դիմումին կցվում են՝

1. <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկը (2 էջից, 2 օրինակ) :
2. <<Իրավունք>>, <<Առավոտ>>, օրաթերթերում հրապարակված հայտարարությունները (կցված են օրաթերթերը 2-ական օրինակներից): Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հայտարարությունը տեղադրված է նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www. azdarar.am).
3. 2016թ. հուլիս - 2017թ. հունիս ընկած ժամանակահատվածում մատակարարված ջրաքանակի ծավալների վերաբերյալ տեղեկատվություն (1 էջից, 2 օրինակ) :
4. Ազգային վիճակագրական ծառայության կողմից ինտերնետային էջում ներկայացված սղաճի ցուցանիշը՝ հունվար-հունիս (1էջ, 2 օրինակ) :
5. Մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների փոփոխության ազդեցությունը՝ դեկտեմբեր 2016թ., փետրվար 2017թ.

ՀՀ, ք. Երևան, Արուսյան 66^ա

Հեռախոս՝ 011590381

Էլեկտրոնային փոստ՝ office@veoliajur.am

ՀՎՀՀ 02655115, պետոեզիստրի գրանցման թիվ 273.120.934743, 16.11.2016թ.

վկայականի թիվ 03Ա.1084743

Հայքիզնեսքանկ ՓԲԸ 11500351562015

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ

Գլխավոր տնօրեն՝

Կրիստիան Լըֆե

07 օգոստոս 2017թ.

